

## ՀԱՄԱՌՈՅՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ\*)

### 6. ԴՐԻՊՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ



ասելորդ ղարի միակ երգիշը հանդիսացել է Գրիգոր Նարեկացին: Նա Խոսրով Անձնացու որդին էր և մանուկ հասակից հանձնվել էր Նարեկա վանքի գիտնական վանահայր ու իր մորեղբայր Անանիա Անձնավացու խնամքին: Այստեղ նա, շրատով ձեռք է բերում անհրաժեշտ զիտովիլուն ու ձեռնադրվում կոսակրոն քահանա:

Նարեկացու ամենանշանավոր գրվածքը Աղոթագիրքն է, որ կոչվում է «Ը արելք»: Մոմի հղակի գործ է, ունի խորհրդապաշտա-

\*) Տես սկիզբ «Էջմիածին» Հոմվար—փետրվար 1948 թ.

\*\*) Հիշում եմ, 1879 թվին էր, Լազարյան ճեմարանի էթիկոնի ուսանող գրվելու առաջին տարին, երբ հայ ուսանողներու աշխատում էին գիտնական Մկրտիչ էմինի Հայոց լեզվի դասախոսության ժամերին միշտ միասին լինել, ևին այդ հնարավոր էր լինում: Էթիկոնի ուսանողության ընդհանուր թիվը 50 էր, իսկ հայերին թիվը՝ 5:

Այդ ժամանակները թարգմանվել ու տպագրվել էին ուսաց լեզվով Հայոց շարականները. Մի օր, եղբ ամենքս ներկա էինք, խոսր օսցվեց շարականներն թարգմանության մասին. Էմինը հայտնեց, որ ինքը ձեռնարկելով այդ գժվարին գործը, կարծում է, որ ավարտի է հաջողությամբ:

— Եվ իրոք, շարականների թարգմանությունը շատ կարևոր էր,— ասաց նա, — որովհետեւ Հայ եկեղեցու դավանության հրատարակված թղթերից և ոչ մեկը այնպես լցարդ ու ճիշտ չեն պարզաբանում հայ դավանության էությունը, ինչպես որ շարականները կարդացեք «Շարականներ»-ի ոռակերն թարգմանության հառաջաբանում Հոմաց կայսր Կիո Մանվել Կոմնենի նամակը՝ ուղղված մեր ներսես Շնորհաւում:

կան բովանդակություն և բաղկացած է 95 գլուխներից, որոնցից ամեն մեկը կոչվում է բան (բանաստեղծություն): Առաջին բանի խորագիրն է «Ը խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ», իսկ մեջացած 94 բաներն ունեն միևնույն խորագիրը, այն է՝ «Եւրատին յամուած կրկին նեծութեան նորին նալողի առ նոյն աղերս մաղրանաց բանի. ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»:

Այս գործը, կրկնում ենք, որ նմանը չունի, Նարեկացին ավարտել է 1002 թվին և մեղ թողել որպես անմահ հիշատակ<sup>\*\*</sup>):

Մենք գարգացինք այդ համակը, ոսն առաջին անգամ տպագրվել էր Զամշանի պահմության երրորդ հատորի մեջ (էջ 116). և անա թե ինչ էր գրված այդ համակում. «Սահիր զայս,— գրում է կայսրը, — զի զայլմակշութիւնն, որ կայր ի սիրու մեր յերդս Զեր և ի պաշտաման, որ առ Աստուծած, բժշկեցաք ըննութեամբ, վասնդի ի մէջ ածար և ժանեաթ երեալավես ի նոցանէ, զի ի բազում տեղիս երկու բնութեամբ զմի Քրիստոն Նորոք փառաւորչը, և պարս զայս ուղղութիւնս, որ իրը և զթարում է, ամենեցում աւել և ցուցանելու:

Հանգամանքից օգտվելով մենք էմինին խնդրեցինք, թարգմանել նաև նարեկը նա պատասխանեց, որ գրահամար ինքը արգեն շատ ծեր է. «Բայց և այնպիս, աղելացրեց նա, — կիրութեմաւ Անցավ մի շաբաթ և նա բերեց ու կարդաց մեղ առաջին բանի թարգմանությունը. —

Զայն հառաջանաց նեծութեան սրտի Ողբոց աղաղակի ենց վիրենծայեմ, տեսողի գաղանեաց:

Глас стечаний, муки сердца,  
Вопль души и вздохания,  
Лишь к тебе возвысило  
О, Всевидящий Создатель,

Նարեկացին շարականներ մի գրել, այլ գանձեր, մեղեղիներ, հոգևոր տաղեր ու ավետիսներ, որոնք, ինչպես առաջինը, միևնույն շարականներն են, շատ նրան տարբերությամբ Հայտնության ամենաճայտնի տաղը սովորաբար «Ավետիս» է կոչվում, որովհետև իր մեջ պարունակում է հովիվնորի ավետիսը Քրիստոնի ծննդյան մասին.—

Խորհուրդ մեծ և սբանշելի,  
Որ յայս առար յայտնեցաւ.  
Հովիվն երգեն ընդ հրեշտակով,  
Տան ամառիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ  
ի թերզեհել քաղաքի.  
Որդիք մարդկան օրենեցէք,  
Զի վասն մեր մարմնացաւ:

Անրաւելին երկնի և երկրի  
ի խանձարուր պատեցաւ  
Ոչ մեկնելով ի հօրէ  
ի սուրբ այրին բազմեցաւ:

### Եվ այլն:

Այսպիսի ավետիսներ շատերն են գրել—  
Ներսիս Շնորհապին, Գրիգոր Աղթամարցին,  
Առաքել Սյունիցին և ուրիշները: Ավետիսների  
մեջ մտնում են մի քանի տող Քրիստոսի  
կյանքից և ամեն մի տողը կերպանում է ա-  
վետիս բառով: Ավետիսների լեզուն հետզհե-  
տե ժողովրդականացել է, իր մազ ժողովր-  
դական լեզվի տարրեր ընդունելով, և ընդ-  
հանրապես ըմբռնելի դարձել ամենքի հա-  
մար:

Ավետիս հոգևոր տաղերի թիվը մեծ է.  
Նրանց մեջ կան բանաստեղծական զգաց-  
մունքներով ու ավյունով շատ գրվածքներ,  
որոնք արժանի են ուշադրության և կարու  
առանձին ուսումնասիրության:

Նարեկացու ավետիսները սակայն դրան-  
ցից տարրերվում են իրենց լեզվի խրիստ-  
ուանությամբ: Օրինակ, Աստվածամորը նկա-  
րագրելիս նա գրծադրում է հետեւյալ խրի-  
ստանությունը. —

«Հուապ երրակին, լոյս գերադանց լուսոյն  
արփի վեհենաճեմ, շողջողենի. Գողովիսկենի էջ,  
մանրահեղեղ գաղտնի շաւիդ անծանօթի  
ճանապարհին:»

Առանձին ուշադրության արժանի են նա-  
րեկացու հետեւյալ չորս տաղերը. — «Երգ  
զարմանալի», «Փառք Քրիստոսի ամենազօր  
յարութեան», «Ծա ծայն առիւնուն ատեմ» և  
«Տաղ կարգավարի»:

Առաջին տաղի մեջ նարեկացին գովաբա-  
նում, գրավառում է Քրիստոսին, իրու ամե-  
նագեղցիկին. առա, ինչպես է սկարագրում

նրան. — նուրբ հոնքեր՝ ինչպես իրար կցված կամարներ, աշխերը ծով ի ծով ծիծաղախիտ երկու փայլակածն արեգակի նման. կայ-  
տառ թևեր, երկթերթյան բերան, որի շրի-  
բից վարդ է կաթում, վարսեր, որոնք քառա-  
հյուսակ բոլորած են այսերի շուրջը, գեղե-  
ցիկ պատմուան, թանկապին գոտի, նազեկի շարժում, երբ քայլելիս ամեն քայլափոխին շողեր են կաթկիտում քայլերից, և այլն:

«Փառք Քրիստոսի ամենազօր յարարեան  
տաղի առաջին մասը կրոնական է, իսկ  
երկրորդ մասը, բայց «Փայանման» բառից,  
ոչ մի կրոնական բան չունի իր ժեղ, Փոխա-  
բերական մտքով նա պատկերումն է Քրիս-  
տոնեության տարածման Հայաստանում, իսկ  
Վարդավառի տաղը բնության գեղեցկության  
գովեստ է— վարդի, շուշանի ու այլ ծաղիկ-  
ների և ծառերի, որոնց մեջ նարեկացին  
այլաբանորեն ներկայացնում է Քրիստոսի  
պայծառափայլությունը: Չպետք է մուանալ,  
որ պայծառափայլության տոնը փոխարինել  
է մեր հեթանոսական վարդակառի տոնին,  
երբ քրիստու վարդարուվ զարդարում էին Աստ-  
դիկի և Անահիտի տաճարները:

Վարդավառի տաղի մեջ նարեկացին գոր-  
ծադրում է ճարտասանական ընդլայնումն,  
այսինքն փոխանակ մեկ երկու խոսքով ար-  
տահայտելու իր միտքը, ընդարձակում ու  
շատ խոսքերով է արտահայտում:

Գոհար վարդի վառ  
ի վեհից վարսիցն արքենից.  
ի վեր ի վերայ վարսից  
Մաւալէր ծաղիկ ծովային:

Հարություն տաղի մեջ նկարադրում է մի  
սայլ, որը կանգնած է Մասսի աջ կողմը ու  
շի շարժվում. նրա վրա դրված են աթոռներ,  
գոհարք, ոսկեղենք, բեհեղք ու ծիրանիք. նրա  
վրա նստած է արքայորդին, որի երկու կող-  
մը կան քերովիք ու սերովիք, իսկ առշե-  
մից մանուկներ, որոնք բռնած ունին խաչն  
Տերումական, սաղմուարան և քնար. սայլի  
վրա դրված են հարյուր խուրծ խորշընան,  
վեց կորնկան և մի մանուշակ, բայց սպալը  
շի շարժվում. նրա վրայի լայնաթիկոնք, ա-  
ճեղակոչ, հաստաբազուկ ճռոտը ձայն է  
տալիս եղներին, որոնք սպիտակ են և  
հուզ մարդարիտ մազեր ունեն: Այն ժա-  
մանակ սայլը շարժվում է տեղից ու ճռն-  
չալով մտնում երաւաղեմ և նոր Սիոնի  
որդիք երգում են «Փառք Քրիստոսի, այսօր  
արձակնեցար»:

Այս տաղը երգել են Քրիստոսի հարաւթյան  
տոնին: Այլլը փոխաբերական իմաստով  
քրիստոնեության տարածումն է Հայուստա-

նում, որ պատճառ է եղել Հեթանոսական կապանքներից արձակվելուն: Այդուն է, ուաղի մեկնությունը, բայց Դավանութեն դա չե-

Այսպես են և նրա մլուա տաղերը, դանձելու ու հոգեւոր երգելով, որոնց իմաստը ընդհանրապես խեղղված է խօթնապանության մեջ:

Նարեկացու տաղերի մասին մեր ասելիքը լրացնելու համար, մեջ ենք բերում առյուծի մասին նրա գրած տաղը, որն իր մեջ ունի կրոնին վերաբերող մի բառ միայն— քառարել: Կարծում ենք, որ այս տաղն էլ ժողովրդի մեջ պահպանված ու վաշուց իմաստը կորցրած մի առասպել է եղել, որին նարեկացին կամեցել է այս երգով կրոնական իմաստ հաղորդած լինել:

### ՅԵՐՈՒԹԵԱՆ ՏԱՂ

Ես ձայն առիւծուն ատեմ,  
Որ կոչէր ի բարաքելին,  
Կոչէր և ձայն առնէր ի սանդարամետու  
Չայն առնէր ի սանդարամետու  
Հաւուն, հաւուն արթնացեալ  
Դիտելով ըգհեթանոսս,  
Չայնէր, ձայնէր տատրակի, ոիրասնուն դ  
սիրելոյն

Սէր յառաւօտէ, ճեմեալ էր անձուկ  
ծագմամբ:

Նարեկացին վախճանվել է մոտ 1010 թվին նարեկա վանքում և թաղվել նարեկ գյուղի Ս. Սանդիսի վանքի մոտ: 1021 թվին, երբ Վասպուրականի Արծրումի Սենեգերիմ թագավորը իր չորս հարյուր հազար ժողովուրդն առած փոխադրվում է Սեբաստիա, նարեկա վանքի վանականներն էլ են փոխադրվում, իրենց հետ տանելով նաև նարեկացու աճյունը, որը հետո նրանք զետեղում են նարեկացու անոննով Սեբաստիայում շինված վանքում:

### 7. ՊԵՏՐՈՍ Ա. ԿԱՓՈՂԵԿՈՍ

Բանոսական ժամանակներից մոտովրդի մեջ պահպանված մի առասպել է եղել, որ նարեկացին հյուսել է իր տաղի մեջ:

11-րդ դարում շարականների նշանավոր երգիչներ են Հանդիսացել «Գետադարձ» կուլտած Պետրոս Ա. կաթողիկոսը և Պահլավոնի իշխան Գրիգոր Մագիստրոսը:

Պետրոս կաթողիկոսի մասին եղած կենսագրական տեղեկությունները շատ թերի են, մեղ հայտնի չեն նույնիսկ նրա ձևնույան թվականը, միայն հայտնի է, որ նա Անանիա Ա. կաթողիկոսի (943—965) քեռողջին և հաշիկ Ա. կաթողիկոսի (972—992) եղբայրն է եղել, այն հաշիկ կաթողիկոսի, որը Տրդատ ճարտարապետի ձեռքով շինել է տվել Արդինայի մեծ եկեղեցին ու կաթողիկոսարանն

այնտեղ փոխադրել: Պետք է և նիմադրել, որ Պետրոսն իր կրթությունը ստացել է եղբայր մոտ՝ Արդինայի կաթողիկոսարանում: Նա հմուտ էր ժամանակի հունական գիտություններին, որ նա ուսուած մարդ էր, երևում է այն թղթակցություններից, որ կատարվել են նրա ու Գրիգոր Մագիստրոսի միջև: Օրինակ, Մագիստրոսը իր մի նամակի մեջ գրում է նրան: «Թողից զայսոսիկ նախաղրեւթիւն մակարել մեծագունիդ գլխոյ, որ ամենայնի ես բաւական և զանապառ հեղուս գիտութիւն և շնորհած Մագիստրոսը նրան անվանում է «գերակատարդ իմաստից»: Մյուս



Գրիգոր Նարեկացի

նամակներից էլ երևում է, որ Մագիստրոսը ուշալ մարդու հետ գործ ուներ

Պետրոսն իր եղբոր հետ միասին հայրենական հարստություն է ունեցել Արշարունյաց գավառում, որտեղ Սխիթար Այրիվանեցու ասելով, նա շշինեաց զՍուրբառի և զՄատաքար»: Իսկ Մատթեոս Ուռչայեցին վկայում է, որ զՈրքամ էր Տէր Շետրոս յաթոռ Հայրապետության ի Հայաստան աշխարհին, ոմէր զկազմութիւն Հայրենինեաց տուեալ ի թագաւորացն Հայոց հենք Հարիւր գեղ անուանի և մեծանիք և շահաւետ ընտիր -ընտիր:

1019 թվին Սարգիս Անանեցի կաթողիկոսը ծերացած լինելով, Գագիկ Ա. արքայի հավանությամբ, Պետրոսին Անիում կաթողիկոս է ձեռնադրում: Շատ լանցած մեկը մյուսի ետեկց վախճանվում էն՝ առաջ Գագիկ արքան (1020 թ.) և ապա Սարգիս համար թողիկոսը, որը թաղվում է Հռոմոսի վանքում: Պետրոսի կաթողիկոսության ժամանակաշրջանը (1019—1058) զուգագիպել է Հայաստանի պատմության թշվառագույն շրջաններից մեկին: Գագիկի երկու որդիները կովում էին թագրատությաց հարատության գահին տիրանալու համար: Հովհաննես-Սմբատը, իրեն երեցը, որը մահեց հիտու զահ էր բարձրացել, իսկ Աշոտը՝ կրտսերը անրավական մնալով դրանից, պաշարել էր մայրաքաղաքը և ուզում էր գահը խլել եղբորից:

Պետրոս կաթողիկոսը սկզբում միանում է Հայ իշխանների հետ և նրանց միահամուռ շանքերով հաջողվում է Հաշտություն կայացնել: Համաձայնություն է կայացվում որ Հովհաննես-Սմբատը, իրեն երեցը եղբայրներից, թագավորի մայրաքաղաքում, իսկ Աշոտը՝ ուղրուց երկրներում:

Հովհաննես-Սմբատը Անիում հաստատվելուց հետո դեռ իր կացությունը բռնորովին հաստատում չէր համարում, որովհետև եղբորից զատ ուներ ուրիշ թշնամիներ էլ, որոնց մեջ ամենավտանգավորն էր հունաց կայսր Վասիլ երկրորդը, որը 1021 թվին մեծ զորքով կռվի էր եկել արխազների թագվոր Գեորգիի դեմ և հայոց Բարձր Հայքը, Տայքը և Ալբարատի մի քանի գամառները ոտքի տակ տալուց հետո ձմերելու համար իշել Խաղողաց երկիրը: Այդ ժամանակ Հովհաննես-Սմբատը հանձնարարում է Պետրոս կաթողիկոսին իր անունից մի կտակ կազմել կայսրին հանդիպում խաչը ծորուխի ջրերը ձգելու հանդիսը կատարել: Ծողովորի վառ երեվակայությունը զարդարել է նրան սուրբ ու հրաշագործ լինելու հատկությամբ: Պատմում են, որ երբ նա խաչը երեք անգամ թաթախել է ջրի մեջ, խաչից լույսի ցնծուղներ են արձակվել, իսկ գետի ջրերն էլ կանգ են առել ու հետ գնացել, որի համար էլ նրա այնուհետև կոչվել է «Խնտագարձ»:

Պետրոս կաթողիկոսը Խաղողացից հանձնված Անիում կթողնի նրան: Այստեղ ահա պարզվում է Պետրոսի դեմքը, որն այնքան խիզախություն, առաքինություն ու աղդասիության ոգի չի ունենում, որ մերժեր խոնուկ, վախեկու ու անարժան թագավորի Հանձնարարությունը, որը կորստաբեր պետք է վիճեր հայրենիքի համար: Նա ոչ միայն խիզախություն չի ունեցել մերժելու, այլև չի աշխատել հասկացնել անարի թագավորին նրա առաջարկի աղետաբեր հետևանքները ու միջոցների չի միմէլ նրա մտադրությունը խափանելու համար: Նա նույնիսկ իր անձի, իրու ազգի կաթողիկոսի, համար անուատված վյուն չի համարել այդպիսի անարգ դռոձի դեպքում միջնորդ հանդիսանալը, այլ հոժարությամբ ու շքեղ հանդիսավորությամբ կատարել է թագավորի հանձնարարությունը:

Նույն 1021 թվին, երբ դեռ Վասիլ կայսրը Պոլսում էր, Վասպորականի թագավոր Սենեկերիմ Արծրունին նկատելով որ ինքը անկարող պիտի լինի դիմադրել սեղուկներին, որոնք արքեն մոտեցել էին նրա երկրի սահմաններին, իր որդիի Դավթին ընծաներով ուղարկում է Պոլսի՝ կայսրին հանձնելու համար այն նամակը, որով նա առաջարկում էր Վասպորականը փոխել Սերբաստիոն ու նրա շրջակայքի հետ: Ստանալով կայսեր համաձայնությունը, Սենեկերիմ Արծրունին շորո հարցուր հաղար ժողովրով փոխադրվում է Սերբաստիա ու նրա շրջակայքը:

Այդ ժամանակները Պետրոս կաթողիկոսը մեծ շոգով մեկնում է Խաղողաց երկիրը, ուր գտնվում էր Վասիլ կայսրը: Պատմում են, որ նրանք իրար հանդիպում են Տրավիդոնում, ուր և կատարվում է Անին հունաց հանձնելու առաջին անարգ սակարկությունն ու վաճառքը: Պատմում են նաև, որ 1022 թվի Քրիստոսի մկրտության տոնին, իրեն պատիվ, կայսրը առաջարկել է Պետրոս կաթողիկոսին առաջինը խաչը ծորուխի ջրերը ձգելու հանդիսը կատարել: Ծողովորի վառ երեվակայությունը զարդարել է նրան սուրբ ու հրաշագործ լինելու հատկությամբ: Պատմում են, որ երբ նա խաչը երեք անգամ թաթախել է ջրի մեջ, խաչից լույսի ցնծուղներ են արձակվել, իսկ գետի ջրերն էլ կանգ են առել ու հետ գնացել, որի համար էլ նրա այնուհետև կոչվել է «Խնտագարձ»:

Պետրոս կաթողիկոսը Խաղողաց երկրից իր Աթոռը՝ Անի չի վերադառնում, այլ մեկնում է Սերբաստիա, Սենեկերիմ Արծրունու մոտ, ուր և մնում է մինչեւ նրա մահը (1029 թ.) ու նոր միայն վերադառնում Անի՝ իր Աթոռը: Այստեղ նրան իշխանները խեթ աշխով են նայում, իսկ թագավորը ատելությամբ է վե-

րաբերում, այն պատճառով, որ նա երկար ժամանակ բացակայել էր Աթոռից, շատ փարթամ կյանք էր վարել ու իրեն այնպես էր պահել, որ թագավորն ու իշխանները նրա ներկայությամբ իրենց նվաստացած են համարել: «Չէր նուաստ Աթոռ հայրապետութեանն, քան զթագաւորութեանն Հայոց»,— ասում է Մատթեոս Ռուճայեցին, Կաթողիկոսն ուներ հինգ հարյուր եպիստոպոս գալառատեսուչ հինգ հարյուր թեմի վրա: Պատմիշը չի հիշում, թե արդյոք իրենց կոչման վեհությունը ճանաչող գործունյա անձնվեր մի բազմություն էին ներկայացնում հայրապետանոցի այս հարյուրավայր անդամները, թե անձնաշահ, ապիկար պաշտօնյաները թայց մենք ունենք և մի ուրիշ բացասական վկայություն. այդ Հովհաննես վարդապետ Կողենի արկի խավարման առթիվ տված բացատրությունն է, որի մեջ պարզ ակնարկ կա և այս մասին:

1041 թվին Հովհաննես-Մմբատը վախճանվում է. վախճանվում է և Աշոտը: Առաջինը ժամանակ չի թողնում, իսկ երկրորդը թողնում է Գագիկ անունով 18 տարեկան մի որդի, կարստու ու աղնիվ մի պատասխի, որը իրուն Բագրատունյաց հարստության հարազատ որդի, օրինական ժառանգութեան ու տեր, Անվո գահն է բարձրանում և երկու տարի խաղաղ կառավարում երկիրը: Սակայն Հովհաննես-Մմբատի տված կտակի համաձայն Անվո գահի օրինական ժառանգութեան էին համարում իրենց նաև բյուզանդացիք:

Պատմում են, որ Վասիլ երկրորդի հաջորդ ու եղբայր Կոստանդինը 1028 թվին, իր մահվան ժամանակ, կանչել է տվել իր մոտ Կիրակոս հայ քահանային, որը մի ժամանակ հայոց կաթողիկոսարանի հյուրատնտեսն էր եղել, և նրան հանձնել Հովհաննես-Մմբատի կտակը, պատվիրելով այն հասցնել հայոց թագավորին: Սակայն Կիրակոսը չի կտարում այդ պատվերը, այլ իր մոտ մի որոշ ժամանակ պահելուց հետո վաճառում է այն Միքայել կայսրին:

Թեև Հովհաննես-Մմբատի մահից հետո Հովհաններին չի հաջողվում տիրել Անիին, բայց Հիշյալ կտակը մնում է նրանց մոտ ու հիմք ծառայում շարունակ պահանջներ անելու: 1044 թվին Հովհան կայսր Կոստանդին թՄանումախը նորից հարուցում է պահանջը, դավաճան Վեստ Սարգսի խորհրդով Գագիկ արքային Պոլիս հրամիրելով: Թեև արքան չէր կամեցել գնալ և Վահրամ Պահլավունին էլ չէր ցանկացել ու խորհրդու չէր տվել գնալու, բայց մյուսները, նամանավանդ Վեստ Սարգսի, հորդորել են նրան գնալու և Պետրոս կաթողիկոսին էլ միջնորդ դարձնելով:

Երդմել են Անին ու տերությունը պահել մինչև արքայի վերադարձը: Ավանդում են, որ այդ երդումը հաստատ ու անփոփոխ պահելու համար նրանք չեն խղճահարվել անգամ ոգրիշը կենարարի արյան մեջ թաթախելու ու այդպես վալիրացնելու իրենց ուժաւը: Այս պարագաներում Գագիկ թարգան Անվո բանալիները, ինչպես և ողջ երկրի հոգաբարձությունն ու խամբքը Պետրոս կաթողիկոսին հանձնելով, մեկնում է Պոլիս, ժիրու գծուկն ի կարմիք և մրունեալ կամ իրու զհաւ ի ծուղակց»,— ասում է պատմիչը:

Հենց որ Գագիկը հեռանում է հայրենիքից, իսկուն հայտնի է գառնում գալաճանությունը. առաջինը կայսրն է դրժում իր ուժաւը և սկսում պահանջներ անել Գագիկ թարգան իրավակից: Արքան նկատելով որ ծուղակի մեջ է ընկեր ու իրականացնել է այն, ին, որ իր սիրուն էր վկարում, այնուամենայնիվ չի ընկճանում ու խիզախորեն մերժում է: մինչև վերջն էլ հաստատ մնալով իր մերժուղական պատասխանի վրա և հույս դնելով «յուրայինների» վրա, որոնք այնպիսի սարսափելի ու տարօրինակ երգմամբ ապահովեցրել էին նրան:

Երբ լուրը հասնում է Անի, այնտեղ ծածկված դահուճանությունը ևս ակներեն է դառնում: Պետրոս կաթողիկոսը, որին հանձնել էր արքան Անվո բանալիները, կաթողիկոս, որ ազգի պաշտպանը պետք է լիներ, կշռադատելով բոլոր հանգամանքները, սկսում է իր երկրորդ, և ավելի զարհուրելի, սակարելությունն անել մայրաքաղաքն ու ամբողջ երկիրը օտարենին հանձնելու համար: Ասել է թե ամեն բան առաջուց չափած, կշռած է եղել և մոռացած է եղել թե ինչ պիտի ստանար փոխարենը: Ժամանակի պատմիչ Լաստիվերացին ասում է, որ նա Սամոսատում եղած բյուզանդական կուսակալին գրել էր: «Մանու թագաւորին. թե մեզ զի՞նչ հատուցանէ փոխարենս, և ես տաց զքաղաքս և զալ ամսուս, որ աշխարհիս են»:

Սակարեկությունը վերջանում է նրանով, որ սպանծիւք և իշխանութեամբ» կաթողիկոսին հռժարեցնում են հանձնելու և նա Անվո քառասուն բանալիները ուղարկում է Պոլիս՝ Կոստանդին թ կայսրին, որպեսզի գա ու Անիին տիրի: Լաստիվերացին ասում է: «Ճշնորհակալիսն զորից տուրս հատուցին կաթողիկոսին, յարմէ զքաղաքն առին»:

Երբ Հայոց զորքն իմացել է, որ թագավորն այլևս չպահան վերագունա, — ասում է Լաստիվերացին, — ու այլին առ հասարակ ամենայն քաղաքն ժողով, ուր էին գերեզմանք թագաւորացն

Հայոց, լային և զաթոռ թագաւորութեանն իւրեանց, և կոծ եղեալ առ հասարակ լային զթագաւորն իւրեանց Գագիկ և անէծս ցաւագին կարդային նենդաւորացն Գագկայ»:

Այդ անեծքի հարվածը զգում է առաջին հերթին հենց ինքը կաթողիկոսը: Առաջին կոսականներից մեկը՝ Կամենասը ուշ բառ առաջին պատույն մեծարէ զհայրապետն, և սկսանի կրով ամբաստան լինել զնմանէ առ թագաւորն և խարանօք հանէ զնա ի քաղաքն», — գրում է պատմիչը: Սկզբում նրան ուղարկում են Կարնն Արծն ավանը, այնուհետև 1051 թիվ Հոռավարի Ե-ին, ճաշի ժամանակ կալանավորվում ու տարվում է Խաղուցյաց Առիճ բերդը ու վերջապես այստեղից էլ Պոլիս, ուր չորս տարի մնում է որպես պատվավոր կալանավոր Կոստանդին Մանումախը և կասկածէր թողով զնա ի Հայս, թէ երթեալ ապստամբեցուշանէ զԱնիի:

Թէ երբ է գրել Պետրոս կաթողիկոսը իր շարականները, մեզ հայտնի չէ, բայց կարծում ենք, որ գրած կարող է լինել այն տարիներին, եղր գտնվում էր աքսորում, Արծն ավանում կամ Խաղուցյաց Առիճ բերդում և կամ Սեբաստիո Ս. Նշան վանքում ապրած տարիներին, որովհետև այս տեղերում, միայնության մեջ միայն նա կարող էր լուրջ մտածել ու զգալ իր գործած մեղքի, հանցանքի լրջությունը ու զղալ, ապաշխարել, որը երևում է նրա շարականներից: Նրա շարականները խմբի են բաժանվում — Մարտիրոսաց, Ննջեցելոց և Մանկունք Սակայն հաստատորեն պնդել, որ դրանք բոլորն ել նրա գրչին են պատկանում, չի կարողի, որովհետև արդեն հայտնի է, որ «Սարսափելի որուամբ և անազին զօրութեամբ» շարականը Սևանեցու երգածն է, իսկ «Յանձնակիրենական ծոցոյ հօր խնձարենալ բանը» Հակոբ Սանահեցունն է: Պետրոս կաթողիկոսի շարականների մեջ երևում են նուրբ ճաշակ և շատ ու խորին զգացմունք. և գահ հասկանապի է, նրանց մեջ իրենց արտահայտությունն են գտել հեղինակի սրտի վերքերի մրմունջները: Նրա շարականներից մեկի մեջ, օրինակ, մեղքերի քավության հետեւալ աղոթքը էաւ. «Ըսկի եղեալս անպիսանացայ, գեղեցկայարմար շինուածոյս բակումն, իմաստունս յիմարացայ ի յալեաց մեղաց, յոր բնեղմեցայ, և այժմ աղաշեմ, զՍտեղծողդ ամենից, հանգոյ և բնեկալ զիրածարեալ հոգիս, յեօրնաստեղեան լուսեղէն խորանս, ուր ծողովին են սրբոց ի խաղաղութեան հոգով նեղափեան յերկնից բարուինսն»: «Պակասեցայ, — շարոնակում է նա մի այլ տեղում, — յազգատոհմէ, լինալ

բռդի զկեանս աշխարհի, և մարմին ունայնութեան դարձաւ ի նոր, ուստի ստեղծաւ յիս մարդասիրեան, բազմագուք Փրկիչ, և փարատեցոյ զցաւ անձին իմոյ»:

Նախքան Պետրոս կաթողիկոսի մասին մեր ասելիքը վերջացնելը, անհրաժեշտ ենք համարում մեջ բերել նաև պատմական մի պանություն, որ ավանդել են մեզ Մատթեոս Ուտհայեցին ու Սմբատ պատմիլը: Պետրոս կաթողիկոսը մտածելով որ «գուցէ այլ ոչ թողուն զիս հոռոմէք ելանել արևելք» շտապում է իր քեռորդուն՝ Խաչիկին կաթողիկոս ձեռնադրել և միաժամանակ երկաթե ամաններով մոտ չորս հարյուր լիտր մեռոն թաքցընել Ախուրյան գետի մեջ՝ Անվլ դրան մոտ, որ վինի թի հոռոմների ձեռքն ընկնի:

Այժմ մի երկու խոսք էլ Պետրոս կաթողիկոսի կենսագրությանը վերաբերող Կարապետ Կոստանյանի հմտուրեն ուսումնասիրված ու տպագրված պատմության մասին, որից մենք որոշ շափով օգտվել ենք այս համառու շարադրանքի համար: Գիտական պատմությունը կրունական բարոյականության գույն ու բնույթ շպետք է կրի: Պետրոս կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը նկարագրել են նրան ժամանակակից պատմիչներից գլխավորապես Արիստուկիս Լաստիվերտացին, իսկ հարեւնցիորեն՝ նաև Մատթեոս Ուտհայեցին, Սմբատ պատմիլը, Սամվել Անեցին և Միթթար Այրիվանեցին:

Որ Պետրոս կաթողիկոսը մատնիշ ու դավաճան է եղել, այս մասին առարկությունը լինել չի կարող. իսկ որ դրա հետևանքը եղել է հազար հազարների կորուատը, կոտրուածը, մասսայական գաղթականությունը, երկրի ավերումը, հայրենիքի դաստարկելը ու զրկվելու իր բնիկ բնակիչներից և օտար երկրներում հայ գաղթականների այլասեռվելն ու մանգարձ կորուատը, այս ևս անառարկելի է:

Արդ, ի՞նչպես կարող է Պետրոս կաթողիկոսը ներողամության արժանանալ, նամանավանդ որ նա մի հասարակ մարդ չի եղել, այլ Ամենայն Հայոց կաթողիկոս, որն ունեցել է իր սեփական կարողությունը. «500 մեծ և անուանի գիւղեր ընտիր-ընտիր, որ Հայոց թագաւորները ընծայել էին Տէր Խաչիկների տոնմին: Այս նրա ապաշխարանքի նմեղքի քաւութեան զդացմունքները, որոնք արտահայտվում են նրա շարականների մեջ, չեն կարող քաւել նրա զարհութելի դաւանութեան մեղքը և արժանացնել նրան ներկիութեան» — ասում է Կարապետ Կոստանյանը: Ճիշտ է ասել պատմիչ Արիստակս Լաստիվերտացին, որ նրա բաժինը պետք է լինի առզգի անէծքը:

## Տ. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

12-րդ դարում շարականների նշանավոր երգիչներ են հանդիսացել Ապիրատ իշխանի երկու որդիները՝ Գրիգոր Գ. Փոքր Վկայասեր կաթողիկոսը և ներսես Շնորհալին, ինչպես նաև ներսես Լամբրոնացին, Խաչատրու Տա-

Վասիլ, Գրիգորիս, Ներսես և Շահան: Սրանցից Գրիգորիսը և Ներսեսը մանուկ հասակից հանձնվել են իրենց պապ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի խնամքին, որը ցանկացել էր նրանց իր մոտ պահել, մեծացնելու նախապատրաստել հոգեոր կոչման համար:

Գրիգոր Բ Վկայասերը կաթողիկոս է ընտրվել 1065 թվին և մըշտական Հայրապետական աթոռանիստ վայրը Հունենալով ապօնել է մերթ Գող Վասիլ մեծ իշխանի դռակում (Մարաշ-Քեսումի մոտ), մերթ Սյավ Լեռան Կարմիր վանքում:

Երբ Գրիգորիսը և ներսեսը բնուրում են իրենց դպրոցական նարիքը, պապը նրանց ուժարկուած է Սյավ Լեռան Կարմիր վանքը՝ վանահայր, գիտնական Ստեփանոս վարդապետի մոտ ուսանելու: Այստեղ Գրիգորիսը և ներսեսը գիտնական վարդապետի մոտ ուսանում են երկու ուրիշ աշակերտների՝ Սարգսի և Խոնատիսի ընկերակցովիամբ, որոնք հետազոտում նշանավոր գրականագիտ վարդապետներ են դարձնու:

Գրիգոր Բ Վկայասերը իր կյանքը նվիրել է մեծ մասամբ վկայաբանություններ հավաքելու և հունաց ու ասորաց լեզուներից թարգմանություններ կատարելու գործին: Նա շարականներ շիզրել, բայց հավաքելու ու թարգմանել է սրբերի վկայաբանությունները: Բացի Սրբոց Վկայաբանությունից, նա զրել ու թարգմանել է «Պատմութիւն Կարուց Ոսկերեանի» և «Թարգմանութիւն Պրոկիոնի ներբողի առ Յովհանն Ոսկերեան» նշանավոր երկասիրությունները և այլ գրչածքներ ու ժառանգություն թողել եկեղեցուն:



ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

րոնեցին ու Հովհաննես «Սարկավագ» մարդապետը:

Սակայն սրբանցից ամենանշանավորը եղել է ներսես Շնորհալին, որը ծնվել է 1102 թվին Շումբ դղյակում:

Ապիրատ իշխանը սմեցել է շուրս որդի՝

Գրիգոր Բ Վկայասերը վախճանվել է 1105 թվին: Վկայասերին հաջորդել է նրա քեռորդի Բարսեղը: Վերջինս իր մահվան ժամանակ, Կարմիր վանքում, կաթողիկոսական քողոն ու գավազանը Գրիգորիսին հանձնելով,

պատմիրում է նրան իր տեղը կաթողիկոս օծել:

Գրիգորիս կաթողիկոս է օծվում 1113 թվին, իր 20-ամյա հասակում և կոչվում Գրիգոր Գ, նրա ընտրության առթիվ կոնդակներ են ուղարկվում ամեն կողմ, բայց ոչ մի տեղից էլ դժոխություն չի լսվում նրա տակավին երիտասարդ լինելու մասին:

1114 թվին գումարվում է Սյավ լեռան երկրորդ ժողովը, որին մասնակցում են 2000 մարդ. այս ժողովում էլ ճանաչվում է կաթողիկոսի ընտրության օրինավորությունը:

Զափազանց մտերմական են եղել Գրիգորի ու իր եղբոր Ներսեսի հարաբերությունը. շնայած տարիքների մեջ մեծ տարրերություն չի եղել, բայց մեծ եղբոր՝ Գրիգորի վարձումքը փոքրի հանդեպ հայրական է եղել: Ներսեսի նկատմամբ գորգուրանքը, փառագլանքը, խնամքը անպակաս են եղել: Գրիգորը ոչ մի բան չի արել առանց եղբոր հետ նախապես իրողրդակցելու. բոլոր խընդիրներում նրանք միասնական մտածողություն, կամք ու ցանկություն են ի հայտ բերել:

Ինչպես տեսանք, Գրիգոր Վայասերը Հայրապետական Աթոռանիստ վայր չի ունեցել. նորոնտիր Գրիգոր Գ կաթողիկոսը մտադրվում է իր համար աթոռանիստ վայր ընտրել որևէ հայաշատ կենտրոն. սկզբում նա ընտրում է Անին, բայց պատմական դեպքի բերմամբ նրան չի հաջողվում իր մտադրությունն իրագործել դրա համար էլ ժամանակավորապես Հայրապետական Աթոռը փոխադրում է Սովոր Պղյակը (1125 թ.) և Ներսեսին էլ եպիսկոպոս ձեռնադրում: Այս դղյակը թեև փոքր էր, բայց կաթողիկոսին ու Ներսես Ծնորհալուն հաճելի էր այստեղ բնակելը, քանի որ իրենք ախտել էին ծնվել: 1147 թվին Գրիգոր Գ կաթողիկոսը Ներսես Ծնորհալուն հետ միասին Հայրապետական Աթոռը փոխադրում են Հռոմէկա ամրագույն բերդը, որը պաշտպանված էր շըրջապատի մամեդական բոնարտի համար: Այս բերդը գրտնվել է եփրատի գետին և եփրատի գետի մասնակի հարձակումներից: Այս բերդը գրտնվել է եփրատի գետի ափին, այնտեղ, որտեղ Մարզման գետը կիսաշրջան կազմելով խառնվում է եփրատին: Բերդը պատկանել է լատին իշխաններին, որոնցից վեցել են նըրանք. բերդը Հայրապետական Աթոռի սեփականություն դարձնելուց հետո նրանք այնտեղ մի հոյակապ եկեղեցի են կառուցվում: Գրիգոր Գ կաթողիկոսը 1165 թվին վախճանվելով թաղվում է Հռոմէկայում, իր կողմից նախապես պատրաստված շիրմի մեջ:

Գրիգոր Գ. երեք ընտիր շարական է թու-

ղել— ավետյաց տոնի՝ «Ըսորհուրդն աննառ», ծաղկազարդի՝ «Մեծանուշաչ այս խորհուրդ» և ի պատիվ Ս. Լուավորչի «Ի յելսն արեւ արեւ»:

Գրիգոր Գ տկարացած լինելով, մաշվանից մի քանի ամիս առաջ, նոր կաթողիկոս ընտրելու համար 1165 թվին ազգային հեկեղեցական ժողով է հրավիրում: Ժողովը միահամայն կաթողիկոս է ընտրում ամենաարժանավորին՝ Ներսես Ծնորհալուն, որն իր ծերությունը և վատառողջությունը պատրվակ բերելով հրաժարվում էր: Սակայն, որոշ ժամանակ անց, ի պատիվ իր մահացած կաթողիկոս եղբոր, որը մահվանից մի քանի ամիս առաջ կաթողիկոսական ժողովում գալում հայ ժողովրդին, որի մեջ հայտնում է իր եղբոր մահվան, իր ընտրության ու օծման մասին և կոչ անում Նրան իր պարտականությունները հանդիպ հայ եկեղեցու ու հայ պատիվի կատարել անթերի:

Ծնորհալին կաթողիկոսական գահ բարձրանալով «Առ համօրէն հայասեռ ազինս» խորագրով մի շրջաբերական կոնդակ է զուում հայ ժողովրդին, որի մեջ հայտնում է իր եղբոր մահվան, իր ընտրության ու օծման մասին և կոչ անում Նրան իր պարտականությունները հանդիպ հայ եկեղեցու ու հայ պատիվի կատարել անթերի:

Ծնորհալին վախճանվել է 1173 թվին, 71 տարի երեք ամիս ու կես կաթողիկոսության ծանրական ժողովում կատարած հայ ժողովրդին, որի մեջ հայտնում է իր եղբոր մահվան, իր ընտրության ու օծման մասին և կոչ անում Նրան իր պարտականությունները հանդիպ հայ եկեղեցու ու հայ պատիվի կատարել անթերի:

Ծնորհալին, աղքին ու եկեղեցուն, որպես ժառանգություն, մեծ թշով գրվածքների է թողել: Նրա ծնորհալի ժողունը ամբողջությունը արտահայտված ենք տեսնում այդ գրվածքներում: Նա Ծնորհալի անվանվեց Հենց արդ իր իմաստալից գրվածքների համար: Մենք հանդիպում ենք մաքուր, ականակիտ բանատեղդության նրա շարականներում, կանոններում, մեղեդիններում, հոգուր տաղիրում ու երգերում, իսկ արձակ գրվածքներում տեսնում ենք տրամարանական դասուղությունը ու հմտությունը աստվածաբանական գիտության մեջ:

Ծնորհալու շափած երկասիրությունների մի մասը գրված է հին հայկական տաղաշափությամբ, ինչես օրինակ՝ Ավագ օրհնություն, Յոթանաւնից, Նինուեացոց, Մեծի Պահող կյուրակե ավուրց շարականները, այլև Մաղկազարդի հարցը, Հոգեգալատյան շորս պատկերը, Վարդավառի երկու պատկերը, Վերափոխման երկու պատկերը, Հովհաննեսու և Մարգարեից հարցերը, Հրեշտակապետաց, Վարդանանց և Ղեոնդյանց շարականները, Հիշեցուոքը, Զարթիքը և ի քեն

Հայցեմքը: Մյուս մասն էլ, ինչպես օրինակ՝ Այսօր անձառը, Նորոգողը, Աստուած անեղը, ձաշու ողորմյալից երգերը, նայեաց սիրովը, Առավտա լուսոն, Աշխարհ ամենայնը, Հիսուս որդին, գրված են արաբական սաղալափությամբ: Ծնորհալին իր մի երկը, որի բովանդակությունն է Հայոց համառոտած պատմությունը, և «Ողբ Եղեսիոյ»-ն նույնպես արաբական տաղալափությամբ է գրել:

Ծնորհալու արձակ գրվածքներն են կազմում երեք մասից բաղկացած «Թուղթ»

ընդհանրական»-ը, ճառերը և մեկնոթյունները, այս մեկնոթյուններից մեկը, Մատթեոսի Ավետարամի մեկնոթյունը, կիսատ է մնացել և այն շարունակելու ավարտել է Հովհանն Երդնկացին: Ծնորհալու գրվածքների մեջ առանձնակի տեղ է գրավում «Հաւատովի խոստովանիմ» աղոթքը, որը բաղկացած է 24 տեսից և գրված է ըստ օրվա ժամերի:

Ստորև բերում ենք Ծնորհալու շարականներից երկու երեք նմուշ.

Նայեաց սիրով, Հայր գրած  
Ի ք ստողծեալ գործն ձեռաց.  
Եվ գրանակս իրեշտակաց՝  
Տու պահապան մեզ տկարաց,  
Փրկեա զանձինս ի փորձանաց՝  
Ի խաւարի շրչող դիւաց.  
Զի ի տուրեղեան և զիշերի՝  
Տացու մեզ փառ անլրուիլի:

Եին անեղ անըսկըզբան՝  
Մենոնդ աննաղ Արդի և Բան,  
Ու արաւեր ըզտի զործոյ  
Եվ ըզգիշեր ի հանգիստ քնոյ՝  
Տու ի ճընջել աշաց մարմենյ՝  
Արբուն իննիլ մեզ ըստ հոգոյ,  
Զի ...

Բարուն հոգոց բանաւորաց՝  
Աղբիւ լուսոյ բաշխող շնորհաց,  
Ի փակիլ դրանց բնորիհանց մարմանց՝  
Լոյս տուր աշաց սրոհց մերոց,  
Ի զիշեաց առ մեզ կանխել՝  
Ընդ նեղինացն օրհնաբանել.  
Զի ...

Եվ այլն:

Ստորև բերվող շարականի յուրաքանչյուր տան ավարտից հնառ կրկնվում է մեա:

Աշխար ամենայն, առ իս ճայցեալ, ախտակից լեռներ: Բանամ զշրուես, բարբառի լեզուաւ, բողութեմ զանձնես: Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛:

Գող եղէ մեղաց, գոտող կորստեան, զոր ինձ փորեցի Դաւեցի զանձն իմ, դաւանեցի, դարան զործեցի:

Երբեմն էի լոյս, և այժմ իմ խաւար և ստուեր մահու: Զիա՞րդ պատմեցից զրի մեղաց իմոց, զի բազում են յոյժ:

Երկինք և Երկիր, եկայք, ողբացէ՛ք եղի ելի զանձն իմ: Ընտրեցի զշարեն, ընկալայ կամաւ զիոյլս մեղաց:

Թարաւիմ տղմով, բաւակիմ ի մեղս, թօր ափիլ չկարեմ: Ժանտ ախտի լցեալ, ժահանտ եղէ ժամանակս բազում:

Ի բաց մեկնեցայ ի սուրբ խորեղոց, ի բարեաց զործոց: Լաւ վարկաւ անձն իմ լուսոյն հեռանալ, լինիլ ընդ խաւար:

Եվ այլն:

Մի նմուշ էլ բերում ենք խաչի ստաղերից.

Համիկ մի պայծառ տեսի աննման  
Ի լայն խաչափայտին վերայ աննման  
Աննմանիդ ո՞վ նման—դու նման;  
Չըևս արծարափայլս ունէր աննման,  
Արեգական շողոյն նման աննման:  
Զձայնիկն ողորմուկ ածէր աննման  
Գաբրիէլեան փողոյն նման աննման:  
Զաշերն արտասուօք լնոյր աննման  
Սուսաւեան ցօղոյն նման աննման  
Աննմանիդ աննման ո՞վ նման— դու նման:

Ծնորհալու թողած գրական ժառանգությունը շատ մեծ է, կարելի է ասել, որ մեր եկեղեցու ժամերգության մի խոշոր մասը Ծնորհալու գրի վաստակն է և անհնար է փոքրիկ նմուշներով գաղափար տալ նրա մեծության մասին:

Ծնորհալին խոշոր քանքար է հանդիսանում ամեն տեսակետից. նա խոշոր է և իր հոգուր գործունեության և գրական վաստակների տեսակետից; Նրան լրիվ բնութագրելու համար անհրաժեշտ էր մի առանձին մենագրություն գրել, այդպիսի փորձ արել է Հայր Ալիշանը, բայց անհաջող; Նրա ոճնորհալի և պարագայ իւրա մենագրության մեջ շատ բան կա, բայց չկա ինքը՝ Ծնորհալին, Կարծում ենք, որ խստակրոնությունը և դա-

վանաբանական նրբությունները որոշ չափով արգելք են հանդիսացել Ալիշանին Ծնորհալու ամբողջական ու խսկական կերպարը գծելու գործում:

Ծնորհալին իր գովածքները գրել է Ժիրի ամբաժից կոչված գրաբարով,— մաքուր, պարզ ու դյուրսմբոնելի ամեն մի գրափառ մարդու համար; Ծնորհալու շարականներից առանձին ուղադրության արժանի է նաև Վարդանանց նվիրված «Խորահերաշ պատկանոր» շարականը, որը երգվում է բուն բափեկենդանի հինգշաբթի օրը, Վարդանանց տոնին; Այս շարականում բերված են Ավարայրի ճակատամարտում պսակված, այսինքն սպանված մարտիրոսների անունները\*):

## 9. Ներսես ԼԱՄԲՐՈՒՆՅԱՑԻ

Ներսես Լամբրոնացին ծնվել է 1153 թվին Կիլիկիո Լամբրոն դղյակում: Նրա հայր Օշին իշխանը Մեծ Հայքի Արցախ գավառոց Կիլիկիա տեղափոխվելով վերանորոգել էր ավեր վիճակում գտնվող Լամբրոն դլյակը ու մշտական բնակություն հաստատել այստեղի Օշինը ամուսնացել էր Ներսես Ծնորհալու Շահան եղբոր դստեր՝ Շահանդուխտի հետո: Ներսեսի ծննդյան անումը եղել է Սմբատ: Ներսես Ծնորհալին արեղա ձեռնադրելով նրան՝ Սմբատ անումը փոխել էր Ներսեսի:

Լամբրոնացու աստվածավախ ծնողները՝ Օշինը և Շահանդուխտը իրենց որդուն մանուկ հասակից նվիրում են եկեղեցուն և կրոնական համապատասխան կրթություն տալով, նախապատրաստում նրան հոգեստ կոշման համար: Լամբրոնացին ուսանել է իր հոր կողմից կառուցված Սկեռա վանքում, Հովհաննես անումով՝ ճգնազգայաց մի վարդապետի մոտ. Հետապայում նա սովորել է նաև հովանարեն, լատիներեն ու եգիպտերեն: Լամբրոնացին դեռ 16 տարեկան պատանի էր, երբ վախճանվեց նրա հայր Օշին իշխանը, կտակելով, որ իր որդի Սմբատը Սկեռա վանքի վանահայր կարգվի: Սմբատը, իմանարով հոր կտակի մասին, մտածում

է խույս տալ հոգեստը կոչումից, սակայն մայրը՝ Շահանդուխտը իր հորեղբար՝ Ներսես Ծնորհալու մոտ տանելով նրան՝ արեղա է ձեռնադրել տալիս: Ծնորհալին նորընծա արեղային ուղարկում է Սյակ լեռան վանքը, «Ճիրացու» կոչված Ստեփան վարդապետի մոտ, հոգեստ գլուխելիքների մեջ ավելի հրմտանալու համար:

18 Տարեկան հասակում Լամբրոնացին կարգվում է Հայրենի քաղաքի քարոզիչ. բայց տեղեկանալով, որ Լամբրոնի վրա հովվելու համար ուղղում են իրեն նաև եպիսկոպոս ձեռնադրելու ու, հոր կտակի համաձայն, հանձնել Սկեռա վանքի վանահայրություն ևս, նա խույս է տալիս և առանձնանում Սաղորու վանքում. այստեղից էլ նա տեղափոխվում է մեզ անհայտ մի ուրիշ վայր և Ներսես Ծնորհալու հրամանով միայն երբեմն այցի էր զնում Հոռմելա:

Այդ երբեմնավի այցելության օրերից մեկը հանդիսանում է Ներսես Ծնորհալու հովարկավորության օրը, երբ նա հովար-

\* Հոգվածի Ներսես Ծնորհալուն և Ներսես Լամբրոնացուն վերաբերող գլուխները տպագրում ենք կրօնականությունը ԽՄԲ.

Կավորությունից հետո մասնակցում է նաև Գրիգոր Տղայի լընտրությանն ու օծմանը:

Գրիգոր Տղա կաթողիկոսը 1176 թվան համարյա թե ստիպմամբ եպիսկոպոս է ձեռ-



Ներսես Լամբրոնեացի

նադրում 23 տարեկան Լամբրոնացուն և ապա Տարսոնի, Լամբրոնի ու դրանց շըրջակայքի առաջնորդ կարգում. սակայն այս անդրամ ևս նա խուս է տալիս Սաղու ա-

նապատշ, որտեղ պառամ է Ս. Պատարագի իր մեկնովունը: Այնուհետև նա ցանկանում է ուխտի զնալ Սեպուհ լելան վրա Ս. Հուսավորչի ճպնարանը, բայց քանից կես ճանապարհից ետք են դարձնում նրան: Վերջում ծպայալ կերպով նա խուս է տալիս այդտեղից ու կիպրոս մեկնում: այսուհետ հունաց լեզվին ու հունական գիտությանը հմտանալուց հետո նա նորից վերադառնում է Տարբու:

Լամբրոնացին վախճանվել է 46 տարեկան հասակում և թաղվել իր հոր կառուցած Սկեռա վանքում:

Նա թողել է գրական մեծ ժառանգություն: Նրա հորինած շարականներից հայտնի են «Այսօր յարեա», «Նորոգեալ կղզի», Համբարձման և Ս. Գրիգոր Հուսավորչի որդիոց ու թուանց շարականները: Լամբրոնացին Հոռմկայում գտնված ժամանակը հունարենից հայերեն է թարգմանել Հովհաննու: Հայտնության մեկնովունը: Սկեռա վանքում 1181 թվան գրել է Սաղմոսի մեկնությունը: Նա գրել է նաև Սողոմոնի Սուակաց, հմասության, ժողովողի և 12 Փոքր Մարդարեից գովածքների մեկնությունները: Հունարենից, լատիներենից և եգիպտաբերենից Լամբրոնացին թարգմանել է սրբերի վկայաբանությունը և կարդի բերելով Վկայասերի ու ներսեմ Ծնորհալու հորեղալր, Եպիպտոսի եպիսկոպոս, Գրիգորի թարգմանած վկայաբերությունները, կազմել «Հարանց Վարք» գիրքը: Ի պատիվ Ծնորհալու նա գրել է մի ուսանավոր ներբող: Նրա գրգածքների մեջ ամենանշանավորն է Ա. Պատարագի մեկնութիւնը:

#### 10. ԽԱԶԱՏՈՒՐ ՅԱՐՈՒԵՑԻ ՎԱՐՈՒԵՑԻ ՎԱՐՈՒԵՑԻ

Խաչատուր Տարոնեցու մասին քիչ տեղեկություններ են մեզ հասել. Հարտոնի է, որ նա իր ժամանակի գիտուական վարդապետներից մենքը և Հաղարծին վանքի (Դիլիջանի մոտ) վանահայրն է եղել: Նա ապրել է Ժիւարի վերջերին և ժողովարի սկզբներին:

Բագրատումյաց Հայքատության անկումից հետո շատ հայեր Վրաստան գաղթելով ապավինել էին վրաց քրիստոնյա պետության պաշտպանության: Վրացիք այս հայերից պահանջում են, որպեսզի կրոնական պաշտամունքը վրացական ձևով կատարեն: Զաքարի սպասալարը և նրա եղբայր Իվանեն, որոնք վրաց արքունիքում մեծ պաշտոնների տեր էին, տեղի տալով վրացիների պահանջի առաջ, թուղթ են գրում Կիլիկիի հայոց կենք թագավորին ու կաթողիկոսին, որ իրենց իրավունք տան բանակում

վրանի մեջ շարժական սեղանի վրա պատարագել և Ս. Աստուածածնի Վերափոխման ու Ս. Խաչի Վերացման տոնները վրացիների հետ միասին տոնել:

Լևոն Բ թագավորը Զաքարի թուղթը ըստանալով 1204 թվին հրավիրում է Սսի ու նրա շրջակայի հովանորականներին ու Դավիթ Գ կաթողիկոսի նախագահությամբ ժողով գումարելով դրական լուծումն է տալիս այս խնդրին և ժողովի որոշումն էլ առանձին դեսպանի միջոցով ուղարկում Զաքարիին: Սակայն Զաքարին դրանով չի բավարարվում. նա կամենում է իր ձեռքի տակ ունենալ նաև արեւելահայ հոգևորականության որոշումը, որի համար էլ երկու ժողովը է հրավիրում — 1205 թվին՝ Լոռվա ժողովը և 1207 թվին՝ Անվո ժողովը: Չնայած Զաքարի գործադրած ակներին բռնությանը,

այս ժողովները ապարդյուն են անցել և ոչ  
մի որոշում չի կայացվել:

Նշանած ժողովներին մասնակցող հոգևո-  
րականների մեջ նշանափոր են եղել երեք  
վարդապետ — Զաքարեի ազգական և Հաղ-  
բատի միաբան Տուքնորդի Գրիգոր եպիսկո-  
պոսը, Հաղարծին վանքի վանահայր Խաչա-  
տուր Տարոնեցի վարդապետը և Գետկա  
վանքի վանահայր Տերումի գիտնական Միսի-  
թար Գոշը: Սրանցից առաջինը, որ խիստ  
դիմ է եղել Հայ գավառության մի նշանա-  
խեցին անգամ կաշելուն, աքսորվել է Կեշա-  
ռուրի կողմերը, որ և հետո բանարկվել է,  
իսկ երրորդը և երրորդը աշխատել են Հաշ-  
տության հջո գոնենել:

Զաքարեի գործադրած բռնությունները ար-  
դյունք չեն տալիս, նա չի կարողանում ձեռք

բերել արևելահայ Հոգևորականության հա-  
մաձայնությունը և նրան մնում է հենցի  
միայն Սոս ժողովի որոշման վրա:

Եարժուն սեղանով առաջին բացօդյա պա-  
տարագը մատուցվում է մեծ հանդիսավոր-  
ությամբ, այս պատարագին քահանայի  
գգեստավորման շարականը երգում է Խաչա-  
տուր Տարոնեցին, որը հմուտ էր եկեղեցա-  
կան երաժշտության:

Այստեղ մեջ ենք բերում այդ շարակա-  
նը, որը գրված լինելով մի մասնավոր գեպ-  
քի առիթիվ, իր ընտարի հատկության շնորհիլ  
հետագայում ընդունվել է Հայ եկեղեցու ժա-  
մակարդության մեջ, իրեւ պատարագի  
ժամանակ քահանայի գգեստավորման շա-  
րական և մինչև այսօր և երգվում է:

Խորհուրդ խորին անհաս անընկիցըն, որ  
զարդարեցից զիերին պետորինդ, ի յառա-  
գաստ անմատոյց լուսոյն, զերապանձ փա-  
ռով զրասս հրեղինաց: Անեառանքաշ զօ-  
րութեամբ ստեղծեր զԱղամ պատկեր տիրա-  
կան և հազերի փառօք զգեստաւուցեր  
ի դրախտն ապեն տեղի բերկրանաց:

Զարշարանօք բն սուրբ միածնիդ նորոգե-  
ցան արշարած ամենայն և վերաբին մարդին  
անմատացաւ, զարդարեալ ի զգեստ անկո-  
ղոպատելի: Անձրևածին բաժակ հրահոսան  
որ մեղեր լառաքեալս ի սուրբ վերաբանեն.  
նեղ և մեզ, Հոգիդ Սուրբ Աստուած, բնի  
պատմուանին զբ զիմաստորին: Տան  
բում վայելի, սրբորին որ զգեցար զվայել-

չորին. սրբութին փառաց ընկ մեջ բն ա-  
ծեալ, պատեա զմիշու մեր նշմարաութեամբ: Որ զարաշագրծ բազուկ բն տարածեցիր  
ընդդեմ աստիճաց: հաստատեա զբազուկ  
մեր կարողութեամբ: Համբարձմամբ ձեռաց  
առ բնեղ միջնորդի: Հիսմամբ բագ ի զրախ  
պատեցես զգմիտու և զգայարանս, խաչա-  
նիշ բնարամամբ բայ Անարովին, ծաղկեալ  
յոսկերել ի զարդ խորանին: Շամից բալորից  
տիրապէս աստուածպետական. նախորաւ-  
պատ սիրով զմեղ զգեստաւուցեր բում  
սուրբ խորհրդոյդ լինել բապաստը: Թա-  
գաւոր երկնաւոր զեկեղեցի բն անջարծ պա-  
հեա. և զերկրպագուս անուանդ բում  
պամեա ի խաղաղութեան:

## 11. ՀՈՎՀԱՆՆԵՍ «ՍԱՐԿԱՎԱԴՐ» ՎԱՐԴԱՊԵՏ

«Սարկավագ» կոչված Հովհաննես վար-  
դապետի մասին քիչ տեղեկություններ են  
պահպանվել Հայ եկեղեցական պատմության  
մեջ. այսքանը միայն Հայտնի է, որ նա ար-  
ցախեցի է եղել ու քահանայի որդի: Հով-  
հաննես վարդապետը իր հոգևոր կրթու-  
թյունն ստացել է Հաղբատի ու Սահահնի  
վանքերում: Հետագայում նա Հաղբատի ա-  
ռաջնորդ է կարգվել:

Հովհաննես վարդապետը երգահյուս շարա-  
կանագետ է եղել: Բացի դրանց նա հմուտ  
է եղել տոմարագիտության. երբ շփոթու-  
թյունն է առաջանում Դվինա երրորդ ժողո-  
վում 551 թվին Մովսես Եղվարդացու կար-  
գագործ հայոց տոմարի շարժական տոների  
վերաբերմամբ, Հովհաննես վարդապե-  
տին է հանձնվում այդ շփոթության վերաց-  
ման դործը, որը նա կատարում է մեծ հմտու-

թյամբ, ուստի տոմարական այդ նոր կար-  
գագործությունը հետագայում սկսում է կոչ-  
վել նրա անունով սարկավագպետիր»:

Հովհաննես վարդապետը վախճանվել ու  
թաղվել է Հաղբատութեան:

Հովհաննես վարդապետի անունը կրտ և  
Ղևոնդյանց նահատակությանը վերաբերու-  
թեակու շարական է մեջ հասել. — «Պայծա-  
ռացար այսօր» և «Ղևոնդյանց համբարձին  
երգեմ ձեզք: Առաջին շարականը՝ «Պայծա-  
ռացար»-ը վերաբերում է եկեղեցուն. այսին-  
քըն Ղևոնդյանց նահատակությամբ պայ-  
ծառացել է Հայոց եկեղեցին. երկրորդ շա-  
րականի մեջ բերված են Եղիշեից առնված  
այն խոսքերը, որ Ղևոնդյանք Հաղպետին  
ուղղված իրենց թղթի մեջ գրել էին. «Ը քէն  
տանջանք, ի մէնց յանձնառութիւն, սուր քո և  
պարանոց մերօւ»

12. ԺԴ ԴԱՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԵՐԳԻՉՆԵՐԸ — ԳՐԻԳՈՐ ՍԿԵՎՈՒՅՑԻ, ՎԱՐԴԱՆ ԲԱՐՁՐԱ-  
ԲԵՐԴՅՑԻ ԵՎ ՀԱՎՃԱՆ ԵՐՋՆԿԱՑԻ

«Սկեռացի» կոչված Գրիգոր վարդապետը կամբըն դդյակի մոտ կառուցված Սկեռացի վանքի միաբաններից էր և Ներսես կամբըն աշցու աշակերտը: Սա թե քաղցր ձայն է ունեցել և թե հայտնի է եղել իր հորինած տաղբով, որ զրել է այրուբենական կարգով Ռշապընթյան արժանի է հատկապես Հովհաննես Մկրտչի ծննդյան նվիրած նրա շարականը — «Արեգակական արդարութեան»:

ՎԱՐԴԱՆ ԲԱՐՁՐԲԵՐԴՅՑԻ. — Սա պաշտոնավարել է Սաղմոսավանքում և Խոր Վիրապի ու Թեղենյաց վանքերում: Նա հայտնի է եղել ոչ միայն որպես երգիչ, այլև որպես պատմագիր, ատենախոս ու մեկնիչ: Նրա գրչին է պատկանում Հովհակիմին և Աննային նվիրած կանոնը՝ «Որ նախիմացք-ը»:

ՀՈՎՃԱՆ ԵՐՋՆԿԱՑԻ. — Երգնկացին կոչվել է նաև «պլուզ» ու «Ճործորդցի»: Պլուզ նշանակում է կարճահասակ, և իրոք նա կարճահասակ է եղել: Նա զիտուն վարդապետ ու համբավավոր քարոզիչ է եղել: Իր ծերության հասակում ուսանել է նաև լատին լիգուն՝ կաթոլիկություն քարոզելու համար Հայութան եկած ունիթորներից: Երգնկացու գրչին են պատկանում Ս. Լուսավորչին նվիրված «Երիշե ամենայն» շարականը, ինչպես նաև Ս. Ներսեսի ոսկերքը Թիֆին ավանում հայտնաբերելու առթիվ գրված «Որ բղոյս անենա» և «Յամենայն յաւ օրինենք» շարականները: Մրանցից բացի, նաև գրել է ջրորնենքի «Այսօտ ճայեն հայրական», «Եօրհ խոտանարսիկաց» և ի պատիվ վերափոխման Ս. Կուահին՝ «Առաջնահաշար պատոյն» շարականները, որոնց մեջ ալինայտ կերպով երեւլու է նրա բանաստեղծական քանքքարը:

Մեր ժողովրդի մոտ էին ավանդություն է պահպանվել երկրաշարժից Անիի կործանված լինելու մասին՝ կապված Երգնկացու քողովական գործության հետ: Պատ-

մում և, որ մի անգամ Երգնկացին Անի է գնում քարոզելու համար, անեցիք, տեսնելով վարդապետի պալուզը հասակը, իրենց հատուկ անբարտավանությամբ, մտածում են ծաղրի ենթարկել նրան: Անին ուներ շատ եկեղեցիներ, բայց ընդհանուր նման քարոզները տեղի էին ունենում Տրդատաշն մայր եկեղեցում, որա համար է անեցիք այդ եկեղեցու տիրացուներին սովորեցնում են, որպեսզի օրվա ժամագիրքը կարդալու ու քարոզելու համար դնեն եկեղեցու ամենաբարձր գործակալը:

Երգնկացին ժամանակին եկեղեցի գալով և նկատելով բարձր գրքակալը, իսկույն հասկանում է անեցիների չար մտադրությունը: Նա հուզվում է, բայց աշխատում է ծածկել իր հուզմունքը և գրքակալին մոտենալով մկում է անգիր կարուղ գիրքը և քարոզելուց հետո էլ իր զարուցիթի անեծքն է ուղղում անեցիների հասցեին: Հստ այդ ավանդության Անիի կործանումը երկրաշարժից առաջացել է հենց Երգնկացու անեծքի հետեւակում:

ԺԴ Գրաբուն, — զբում է Դ Խաչկանցը, — այլև կդադարի շարական յօրինելու փափագը, տօներն ու ժամանակաբութիւնն իրենց վերջնական կատարելագործումը զաած են: Զանագան երգեր ալ ունինք ԺԴ-ի գրքուն, որոնց հեղինակներն են Կոստանդին Արևելցին, Կիրակոս Երգնկացին և Գրիգոր Մերձնցը, որ աճագին հատոր մը թողած է երգերն երգերին ունինք են գովեստ Ս. Էջմիածնի, ասկէ հՀայտնի, թէ էջմիածնին որքան մեծ նշանակութիւն ունէր կամ ժողովրդականացած էր:

Շարականների հորինումը հոգեւոր անձերի կողմից գարարում է Հակոբ Ա Կաթողիկոսի օրոք (1268—1286), վերցինս գրում է «Կանոն հեշափառ ծննդեան Տիրումայն ի Յովակիմայ և յԱնենալէ»:

13. ՎԵՐՋԱԲԱՆ

Մեր հին ու նոր անցյալում շարականները հանդիսացել են ժողովրդի սիրած երգերը: Նրանք երգել են ոչ միայն եկեղեցիներում, այլև եկեղեցուց դուրս ժողովրդական տոնախմբությունների, էսրարժանքների ժամանակ, աշխարհական տաղերի հետ միասին: Նրանց տարածմանը մեծ շափով նըստել են վանական ու եկեղեցական դրաբոցների սաները, որոնք այդ դրաբոցներում շարականները սովորելուց հետո, երգել են դրանք ամեն տեղ:

Սակայն, պիտի ասենք, որ մեր ժողովրդի մի տավար մասը շարականներից շատերի բուն իմաստը չի հասկացել ու չի հասկանում, և այդ ոչ նրա համար, որ շարականները գրված են գրաբար, այլ բոլորովին այլ պատճառներով: Շարականների գրաբար լեզուն պարզ, մաքուր, շարժաթիւ գրաբար կոչված լեզուն է, որը մատչելի է ամեն մի գրագետ հայի համար ու գրանց մեջ քշերը կգտնվեն, որ շրմբունեն այդ լեզուն: Շարականները շասկանալու բուն պատ-

ճառը նրանց բովանդակության վերացականությունն է, երկրորդ՝ նրանց պատկերավորությունն ու հարտասանական ձևավորումը, և երրորդ՝ Ս. Գրոց գիտության պակասությունը, Ս. Գրոց, որոնցից առնված մեջքերումներով հագեցված են մեր շարականները: Ս. Գրոց գիտության, եթե ոչ լիակատար, գոնե որոշ շափով ծանոթ լինելու անհրաժեշտ է շարականների իմաստն ըլլրունելու համար:

Բայց, չնայած դրան, մեր հին ու նոր անցյալում ժողովուրդը մեծ սիրով ունինքի է շարականները. մեր ժողովուրդը հատկապես սիրել է շարականների սուր ու ուղրուն եղանակները, ընտելացած լինելով դրանց պարսկական ու թուրքական եղանակների ազդեցության շնորհիլ ել այդ սերը, հակումն ու ընտելացումը պարսկա-թուրքական եղանակներին այնքան մեծ ու զորեղ է եղել, որ կարծիք է ստեղծվել, թե հայերը երգեցողության իրենց սեփական հարազատ եղանակները չունեն, մի անհեթեթ կարծիք, որ տեսել է մինչև մեր ադդային զարթոնքի օրերը, երբ այն հետզհետե տեղի է տվել ստուգդ ու իրական հայացքի առջև դեռ մինչ ժեթ կոմիտասը, որն ելլուպական իր հանճարեղ երաժշտագիտությամբ վերջնական շախշախիչ հարվածը հասցրեց այդ հին մոլոֆիան: Կոմիտասը ընտրեց, զտեց ու մաքրեց հայ եղանակները խորթ տարրերից ու ամենապայծառ լուսի տակ աշխարհին ներկայացրեց հայկական զմալլելի երաժշտությունը, հայ շարականների, հոգևոր երգերի ու բուն ժողովրդական երգերի հիասքանչ եղանակները:

Արժանահիշատակ կոմիտաս վարդապետն այս մասին ասում է. «Եփոթեցնող կետն այն էր, որ մեր ժողովրդական եղանակները պարզ կազմ ունեն, նվազ զարդարված էին, քան եկեղեցական եղանակները: Արդ, հանելովի բանալին պիտի տային ինձ եկեղեցու այն եղանակները, որոնք ավելի պարզ էին:»

Եվ երկար որոնումներից հետո, վերջապես, գտա այնպիսի եղանակներ, որոնք եկեղեցում հրկու տեսակ են երգվում ծանր ու թեթև: Այդ եղանակները կոչվում են առոնական: Մանրը նման է իր գեղեցիանքով թրքականին, իսկ թեթևը՝ իր պարզությամբ ժողովրդական քեղեցանքները, նկատեցի, որ նրանք իրենց խորքով նման են թեթևներին: Ուրեմն սրանց հստակ երևում էր, որ այդ պարզ եղանակներն զարդարվել էին թրքական ոճով, նրանց հանդիսավորությունն և շուրջ տալու դիտավորությամբ, երբ մենք դեռևս չունեինք

մեր բազմաձայն երգեցողությունը... և այլըն:

Մենք ասացինք, որ մեր մեջ ըեղած շարականագիրներն ամենքն էլ իրենց վերագրված շարականների հոկական հեղինակներն են, սակայն, կան աշճանավորություններ, որոնք չեն կարող այս կամ այն շարականը գրած լինել, ինչպես օրինակ նորենացին և Հովհան Մանդակումին: Խորենացուն վերագրվում է «Ընծացուցչե»-ների հեղինակությունը (լեզվական հատկանիշների հիման վրա), սակայն, այդ թեականությունը կմնա, մինչև որ վերջնականապես չշշտվի նրա ապրելու եթե ոչ ճիշտ ժամանակը, գոնե դարը: Խոկ Մանդակումին, որ Գյուղ կաթողիկոսի ազգականն ու ընկերն էր և կաթողիկոսացի էր նրանից հետո, հանդիսանալով վահանաց շարժումների ոգեշնչողն, անշուշտ, չեր կարող իրեն վերագրված շարականներից մի քանիսը դրած լինել, քանի որ շարական գոմելը, իր ժամանակին, սուրբ ու կաթողիկոսի գրչին վայել գործ է համարվել: Բայց քանի որ լուրջ ուսումնակրթությամբ մինչև օրս չի պարզված, թե Մանդակուման վերագրված շարականներից ո՞րն է խմացես նրա գրչին ուսումնակրթությունը, մենք էլ ձեռնպահ ենք մնացել նրան շարականագիրների շարքը դասելուց:

Շարականագիր են հանդիսացել անկասկած նաև Անանիա Շիրակացին և Գրիգոր Մագիստրոսը, բայց որովհետեւ դրանց անոնները մեր շարականոցում, իրեն այդպիսիների, աղոտ են հիշվում, ուստի դրանց նկատմամբ ևս ձեռնպահ մնացինք:

Խոսելով Պետրոս Դետադարձ կաթողիկոսի գրած շարականների մասին, մենք իր տեղում նշեցինք, որ նրան վերագրված շարականների շարքից պիտի հանվին «Սարսփելի որոտմամբ և ահազին օօրաբերամբ» ու «Յանակը բեկանական ծոցոյ հօր խոնաբենեալ բանց» շարականները, որոնցից առաջինը պատկանում է Պետրոսին ձեռնպարտող Սարգսիս կաթողիկոս Սևանեցուն, իսկ երկրորդը՝ Հակոբ Սանահնեցուն, ասել է թե Անվո Գառնիկ Շահնշահի ժամանակակից Սարգսիս Սևանեցին և Հակոբ Սանահնեցին նույնպես շարականագիրներ են հանդիսացել:

Անհրաժեշտ ենք համարում մի երկու խոսք էլ ասել մեր շարականների եղանակների ու հայ հնագույն ձայնանիշների կամ խաղերի ուսման գործի մասին, որ Մանրուսումն է կոչվում, օգոտիւուկ կոմիտասի գրությաներից: Հին երաժիշտները Մանրուսումն ասելով հասկացել են ուսումն եկեղեցու երգերի, եղանակների ու խաղերի մասին, թե այդ ուսումն որքան կարևոր է համարվել, այդ երկում է Ներսես Շնորհալու «Ընդ-

հաերական»-ից, որի մեջ նա խռովով ձեռնադրվող քահանաների ուսման ու գիտության մասին, անհրաժեշտ պայման է համարել «Ձեկեղեցական գիրս ուղիղ ընթեռնով և զմանը ուսմունս ձայնաւորաց պաշտել յեկեղեցիս և ապա դալ ի ձեռնադրութիւն քահանայոթեան։ Հայտնի չէ, թե գոյություն ունեցել է մի դասագիրք կամ դրա նման մի բան. մեր ձեռքն են հասել միայն խաղագրված եղանք։ Պետք է կարծել, որ որևէ ուղեցուց գոյություն է ունեցել, որը մեր ձեռքը չի հասել և մենք գեռ չգիտենք այդ խաղերի ընթերցանության բանալին։ Կոմիտասը 16 տարի աշխատել է խաղերի վերծանման վրա և հույս է ունեցել, որ իրեն կհաջողվի վերջիվերջո վերծանել դրանք, բայց անողոք հիմանդրությունը արգելք է հանդիպել։

Շարականների ուսուցիչ փիլիսոփաների սահին մեջ բացատրություն տալիս է դարձալ Ներսես Շնորհալին. «Ովանիմք, — ասում է ա, — սովորութիւն փիլիսոփայ ասել, որ ուժշտական արևստի կատարեալք են։ անրուսման նշանավոր կենտրոններ են եւ կիլիկիո Արքակաղին, Դրազարկ, Սկևր, Կարմիր վանքերը, Եղանակների անձին տեսակների անվանակոչությունը»

Հայտնի է շատ վաղ ժամանակներից և հատուկ է եղել արևելյան աղքերին — հայերին, պարսիկներին, քրդերին, արաբներին, տաճկներին ու մյուսներին, որոնք, բացի հայերից, մինչև այսօր էլ պահպանում են այդ։ Մեր եղանակների միայն անունները և անհայտ խաղերն են մնացել ձեռագրերի մեջ։ Դրանցից էլ հիմնական եղանակները պահպանվել են շարականների մեջ, հետևեալ ութձարնով։

### Ա.Զ. Առաջին ձայն։

Ակ. Առաջին կողմ

Բ.Զ. Երկրորդ ձայն։

ԲԿ. Ավագ կողմն։

Գ.Զ. Երրորդ ձայն։

ԳԿ. Վար ձայն։

Դ.Զ. Չորրորդ ձայն։

ԴԿ. Վերջ ձայն։

Մեր սույն հողմածր շարականների մասին ու թե խորը ուսումնասիրության, այլ թեթև, ուղղագծային բնույթ է կրում. մեր նպատակըն է եղել համառոտ ծանոթություն տալ մեր հին գրականության բանաստեղծագուն ճյուղի մասին, որի գլուխ գործոցն են հանդիսանուած շարականներուն։

